

Մասնավորապես, ենթակառուցվածքների, սպասարկման օբյեկտների ցանցի զարգացումը, զբոսաշրջային եթուղիների բովանդակային հարստացումն ու արդիականացումը, ինչն արդիական ու հրատապ է ոչ միայն Վայոց ձորում:

Միաժամանակ, ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման ապակենտրոնացման համատեքստում, ԶԿԶ առումով դրական մեծ ազդեցություն կարող է ունենալ Վայոց ձորի մարզում զբոսաշրջության զարգացման տեղական մարմինների ու կազմակերպությունների կարողությունների ավելացումն ու արդյունավետ աշխատանքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Weaver David Sustainable Tourism: Theory and Practice, 2006, 240 p.
2. www.armstat.am - Հայաստանի Հանրապետության ԱՎԾ պաշտոնական կայք

SUSTAINABLE TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES, PROBLEMS AND PERSPECTIVES (ON THE EXAMPLE OV VAYOTS DZOR MARZ OF RA)

Sargsyan T.A.

Yerevan State University, Yerevan, Republic of Armenia, tigran.sargsyan@ysu.am

ANNOTATION

The main ideas of sustainable tourism development are analyzed in the article. As the main spatial tool of sustainable tourism development implementation, the idea of tourism destination is suggested and substantiated for Vayots dzor marz of RA. A comprehensive SWOT analysis of sustainable tourism development in Vayots dzor tourist destination is accomplished in the article.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԺՇԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վալեսյան Ա. Պ.

Շիրակի պետական համալսարան, Գյումրի, Հայաստանի Հանրապետություն an.valesyan@mail.ru

Զբոսաշրջության զարգացման վրա ազդող գործոններից բնական գործոնները կարող են ուղղակիորեն խթանել զբոսաշրջության զարգացմանը: Այդ գործոնները կարելի է գնահատել տարբեր տեսանկյուններից՝ տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, բժշկաաշխարհագրական, ռեկրեացիոն և այլն: Բժշկաաշխարհագրական տեսանկյունից միջավայրը դիտվում է մարդու առողջության, ինքնազգացողության վրա ազդող մի հզոր համակարգ, որի յուրաքանչյուր բաղադրիչն ազդում է ոչ միայն առանձին, այլև փոխկապակցված մյուսների հետ: Այն թույլ է տալիս կատարել ընտրություն միջավայրի առողջարար

հնարավորությունների հարցում, ճիշտ սնվել ու հագնվել համապատասխան պայմաններում, նպաստում է նաև զբոսաշրջության արդյունավետ կազմակերպմանը: Մարդու օրգանիզմի ու ինքնազգացողության վրա ազդում են բնական միջավայրի բոլոր տարրերը, բայց յուրաքանչյուրը տարբեր չափով: Այս հոդվածում անդրադառնանք ռելիեֆի և կլիմայի գործոններին:

Ռելիեֆը ռեկրեացիոն գործունեության հետ անմիջական կապ ունի, և որպեսզի նկատենք դրա բազմազան ազդեցությունն այդ գործունեության արդյունավետության վրա, անհրաժեշտ է հաշվի առնել «հանգիստ» հասկացության ողջ բովանդակությունը. հանգիստը միջոց է, որը վերացնում է հոգնածությունը և նպաստում աշխատունակության վերականգնմանը: Առանձնացվում են հանգստի հետևյալ տեսակները (Кружалин, 2004).

- հանգիստ, որը պահանջում է առանձնացում, ուժերի նվազագույն ծախսում,
- հանգիստ, որը պահանջում է ֆիզիկական ուժերի լրիվ վերականգնում առանց առանձնացման,
- հանգիստ՝ ուղղված առողջության, հոգեկան ուժերի վերականգնմանը,
- հանգիստ, որը նպաստում է նպատակաուղղվածության դաստիարակմանը և այլն:

Ռելիեֆը մեծապես ազդում է մարդու վարքագծի վրա, եթե տեղավայրը լեռնային է, ինչպես ՀՀ, ապա մարդիկ մշտապես պատրաստ են այսպես կոչված «վտանգների» վերացմանը, որը հաղորդում է նրանց լրացուցիչ լարվածություն, հետաքրքրասիրություն, զգոնություն, իսկ հարթավայրաբնակներն ավելի հանգիստ են ապրում:

Ռելիեֆը որոշակիացնում է առողջարանների տեղն ու պատահական չէ, որ դրանց մեծ մասը լեռներում են: Հնում տուբերկուլոզով հիվանդների բուժման ամենանպաստավոր վայրերը համարվել են լեռները:

ՀՀ-ում հանգստի տարբեր ձևերի կազմակերպման վրա նույնպես ռելիեֆի ազդեցությունն էական է: Տարածքի 1800մ միջին բարձրությունը, առավելագույն (Արագած 4090մ) և նվազագույն բարձրությունների (Արաքսի և Դեբեդի հովիտներ 375-380մ) նիշերի մեծ տարբերությունները թույլ են տալիս կազմակերպել հանգիստ բարձրադիր, գեղատեսիլ լեռնային համակարգերից (Զանգեզուր՝ Կապուտջուղ 3904մ, Գեղամա՝ Աժդահակ 3597մ, Փամբակ՝ Թեժ 3101մ, Վայք՝ Գոգի 3120մ և այլ լեռներ) մինչև ցածրադիր գետահովիտները:

Ի՞նչ փոփոխություններ է կրում մարդու օրգանիզմը լեռներում: Բարձրությանը զուգընթաց մթնոլորտային ճնշումը նվազում է, նվազում են նաև օդի բաղադրության մեջ մտնող գազերի մասնական (պարցիալ) ճնշումները: Թթվածնի 140մմ ս.ս մասնական ճնշման դեպքում՝ 1000մ սկսած, նկատվում են թերթթվածնության՝ հիպօքսիայի առաջին նշանները. հեղ, անոթազարկի հաճախացում, գլխապտույտ, ինքնազգացողության ընդհանուր վատացում (Ավագյան, 2001): Հետևաբար մեծ բարձրություններ հաղթահարելիս պետք է պատրաստ լինել այս երևույթներին կամ ուղղակի խորհրդակցել բժշկի հետ հնարավոր բարդությունների շուրջ: Ռելիեֆի

առողջարար լինելը մեր տարածքի համար ուղղակի առավելություն է, օրինակ՝ բրոնխային հեղձուկը(ասթմա) բոլոր տարիքային խմբերի մոտ ամենալավ բուժվում է լեռնային պայմաններում: Դա բացատրվում է նրանով, որ թերթթվածնայնությանն ու ածխաթթվային քաղցին հարմարվելու ընթացքում, այդ հիվանդների մոտ ուժեղանում է թոքերում օդափոխման գործընթացը, և ավելանում է ներշնչման ծավալը, որով էլ զարկերակային արյունը հարստանում է թթվածնով: Լեռնային շրջանների մեծ բարձրության, կլիմայի, օդի կառուցվածքի և այլ առանձնահատկու-թյունների շնորհիվ օրգանիզմում ուժեղանում է արյունաստեղծման գործընթացը, մեծանում է հեմոգլոբինի քանակությունը, կարգավորվում է նյութափոխանա-կությունը (Ավագյան, 2001): Թոքային տարբեր հիվանդությունների բուժման համար անփոխարինելի է «Արագած» մանկական առողջարանը 1900մ բարձրության վրա: Բարձրալեռնային են նաև Ջերմուկը՝ 2050-2120մ, Հանքավանը՝ 1900մ, Ծաղկաձորը՝ 1860մ և այլն:

Վայրի կլիման նույնպես շատ կարևոր է, քանի որ կլիմայափոխումը՝ հատկապես կտրուկ, մեծ ազդեցություն ունի օրգանիզմի հարմարվող մեխանիզմների վրա: Երեխաների, տարեցների, շնչառական, սիրտանոթային և օրգանիզմի այլ համակարգերի ֆունկցիոնալ խանգարումներով, դյուրագրգիռ, անկայուն նյարդային գործընթացներով հիվանդների համար կլիմայի նման փոփոխությունները վնասակար են (Ավագյան, 2001):

ՀՀ կլիման զբոսաշրջության վրա ազդող կարևոր գործոն է, և այն գնահատել ենք տարբեր բարձրության զբոսավայրերի համար, որտեղ զբոսաշրջիկների հոսքը համեմատաբար մեծ է: Առանձնացված վերընթաց երեք գոտիներում տարվա տաք շրջանի եղանակային պայմանների ազդեցության հետևանքների վերլուծություն և գնահատում է իրականացվել կիրառելով նաև $E_{E\Omega}$

$$E_{E\Omega} = 37 - (37 - t) / (0,68 - 0,0014f + t / (1,76 + 1,4v^{0,75})) - 0,29t(1 - f/100)$$

(Էկվիվալենտ էֆֆեկտիվ ջերմաստիճանի, այսինքն՝ օդերևութաբանական տարրերի թողած ջերմային ազդեցությունը մարդու վրա անշարժ օդի, 100% հարաբերական խոնավության պայմաններում ըստ Ա. Միսսենարդի), և ՆԷԷ\Omega -ն՝

$$\text{ՆԷԷ\Omega} = 7^\circ\text{C} + 0,8\text{ԷԷ\Omega}$$

(նորմալ էկվիվալենտ էֆֆեկտիվ ջերմաստիճան ըստ Ի. Բուտնի, որում հաշվի է առնվում մարդու ջերմազգացողությունը քամու պայմաններում, քանի որ թույլ քամին անգամ նվազեցնում է այն նկատելի չափով) ցուցանիշները:

Կան կլիմայական պայմանների գնահատման տարբեր մոտեցումներ ևս, սակայն վերը նշվածներով կարելի է գնահատել մարդու օրգանիզմի վրա օդերևութաբանական տարրերի ազդեցությունները տալով դրանց հարմարավետության համապատասխան մակարդակներ (Синицын, 2013):

Ցածր գոտի՝ մինչև 1200մ-զբաղեցնում է հանարապետության տարածքի մոտ 20%՝ Արարատյան դաշտի, Արագածի նախալեռնային, հյուսիս-արևելյան, Սյունիքի հարավային(Երևան՝942մ, Վաղարշապատ՝853մ, Իջևան՝732մ, Օձուն՝1105մ, Կապան՝

705մ, Մեդրի՝ 627մ, Հադարձին՝ 1050մ և այլն) հատվածների ցածրադիր տարածքները: Գոտին բնութագրվում է զարնանային տաք եղանակներով՝ ջերմաստիճանը միջինը 12° C, մթնոլորտային տեղումները 35-40մմ, արևափայլքի միջին ամսեկան 180-190 ժամ տևողությամբ: (Կլիմայական տեղեկագիր, 2012) Այս շրջանում ջերմաստիճանային տատանումները մեծ չեն հետևաբար նաև օրգանիզմի վրա դրանց գրգռիչ ազդեցությունները ևս մեծ չեն:

Ամռանն ընդհակառակը ստեղծվում են մարդու օրգանիզմի համար բավական լարված պայմաններ՝ բարձր ջերմաստիճանով, միջինը 25-26°C, առավելագույնը՝ 41-42°C, օդի հարաբերական խոնավությունը փոքր է, իսկ ընդհանուր գնահատմամբ այս պայմանները դիսկոմֆորտ են: Ըստ ԷԷՋ-ի ցուցանիշների մարդու ջերմազգացողությունը գնահատվում է «ջերմային ուժեղ ծանրաբեռնվածություն»՝ >30°C, օրինակ՝ Երևանում այն կազմում է 31,2°C, իսկ ՆԷԷՋ՝ 31,9°C և գնահատվում «զերտաքացում», այսինքն՝ մարդու օրգանիզմը կարող է ենթարկվել ջերմային հյուծման:

Առավել մեղմ են պայմանները երկրի հյուսիս-արևելյան շրջաններում, այստեղ ԷԷՋ-ն գնահատվում է որպես «բավարար տաք», Իջևանում հուլիսին կազմում է 16,4°C, իսկ ՆԷԷՋ՝ 20,1°C, այսինքն՝ «լավագույն» պայմաններ: Կլիմայական տաք պայմաններ սիրող զբոսաշրջիկների համար այս պայմանները նույնիսկ հաճելի են, միայն թե խորհուրդ է տրվում ցերեկվա ժամերին բացօթյա վայրերում լինել սահմանափակ տևողությամբ, արեգակնային ճառագայթման մեծ քանակության պատճառով ջերմային հարվածից խուսափելու համար: Օրգանիզմի վրա մեծ ազդեցություն է թողնում նաև խոնավությունը: Այս գոտում հարաբերական խոնավությունը 35-38% է, որը կարող է հանգեցնել օրգանիզմի ջրազրկման վտանգի, հետևաբար հեղուկների օգտագործումը պարտադիր է, օրական 3 լիտր և ավելի: Անհրաժեշտ են նաև մրգեր ու տարբեր տեսակի բանջարեղեններ, մսամթերքների օգտագործումը այս ժամանակահատվածում պետք է փոքր ինչ կրճատել:

Լեռնահովտային քամիները, որոնց միջին արագությունը 2,0-3,0 մ/վ է, նվազեցնում են ամառային տապը, հետևաբար ջերմազգացողությունը նվազում է: Մթնոլորտային ճնշումը տատանվում է 690-705մմ.ս.ս շուրջ (Կլիմայական տեղեկագիր, 2012): Աշնանը եղանակային պայմանները մոտ են զարնանային և գեղագիտական տեսանկյունից, դրանք մարդկանց մոտ առաջ են բերում հուզական վիճակներ: Օրգանիզմը դառնում է զգայուն միջավայրի եղանակային (ջերմաստիճան, խոնավություն, մթնոլորտային ճնշում) և հիվանդածին (վիրուսներ, բակտերիաներ, սնկեր) տարրերի նկատմամբ:

Միջին գոտի՝ մինչև 1600մ – զբաղեցնում է երկրի տարածքի մոտ 15% (Արզնի՝ 1262մ, Գառնի՝ 1423մ, Դիլիջան՝ 1256մ, Գյումրի՝ 1528մ, Վանաձոր՝ 1376մ, Ստեփանավան՝ 1397մ, Գյուլագարակ՝ 1297մ և այլն), սակայն կլիմայական պայմանների որոշակի հակադրություն է նկատվում բարձրության նույնիսկ ոչ մեծ տարբերություններ ունեցող վայրերում: Այս գոտու զբոսավայրերն ունեն տարբեր՝

առողջարանային, պատմամշակութային կամ ուղղակի հանգստի անցկացման նշանակություններ: Գարնանային ու աշնանային եղանակային պայմանները մեղմ են՝ ջերմաստիճանը 8-12°, մթնոլորտային տեղումները 60-100մմ: Այս գոտում կան առողջարար լավագույն պայմաններ, որոնք էլ ավելի բարձր արժեք են ձեռք բերում անտառային բուսականության շնորհիվ: Բուժական զբոսաշրջության մեծ ներուժ ունեն հատկապես Արզնին (բալնեոկլիմայական սրտաբանական առողջարան) և Դիլիջանը (շնչառական տարբեր հիվանությունների բուժման ու կանխարգելման առողջարան), որոնք գտնվում են գրեթե նույն բարձրություններում: Արզնիում արևափայլքը մեծ է՝ 2223 ժամ, միջին տարեկան ջերմաստիճանը բարձր՝ 9,7°C, իսկ ամռանը՝ 22,3°C, հարաբերական խոնավությունը՝ 53%, օգոստոսին ավելի փոքր՝ 45%, իսկ Դիլիջանում ջերմային ցուցանիշներն համեմատաբար ցածր են. արևափայլքը մոտ 2000 ժամ, օդի միջին տարեկանը ջերմաստիճանը 8,3°C, հուլիսյանը 18,7°C, սակայն խոնավությունը բարձր է հուլիսին այն կազմում է 77%: ԷԷՋ Դիլիջանում հուլիսին կազմում է 13°C՝ «բավարար տաք», իսկ ՆԷԷՋ՝ 17,4 °C, այսինքն՝ «հարմարավետ»: Ամռանը հանգստացողների թիվն ավելի է աճում, աստիճանաբար բարձրացող ջերմաստիճանի շնորհիվ, այս պայմանները շնչառական և սիրտանոթային համակարգի հիվանդություններ ունեցող մարդկանց համար կարելի է անփոխարինելի համարել:

Բարձր գոտի՝ 1600մ բարձր-երկրի տարածքի մեծ մասն է զբաղեցնում, այն աչքի է ընկնում ոչ միայն միջավայրի տարրերի, այլ նաև զբոսավայրերի (Հանքավան՝1922մ, Ծաղկաձոր՝1860մ, Ջերմուկ՝2064մ, Ամբերդ՝2071մ, Սևան՝1916մ և այլն) մեծ բազմազանությամբ, որոնք ունեն պատմամշակութային, առողջարանային, հանգստի անցկացման ինքնատիպ պայմաններ ու նշանակություններ: Տարվա տաք շրջանում բարձավեռնային այս շրջաններում հանգստի անցկացումը հաճելի ու առողջարար է. մեծ արևափայլք՝ 2400-2500 ժամ, բավարար խոնավություն՝ 68-72%: Ամառը կարճ է, զով՝ 13-16°C, բնորոշ են պարզ, արևոտ եղանակները, որոնք նպաստավոր են զբոսանքների, դիտումների համար: Բնորոշ են նաև քամիները՝ միջին արագությունը գերազանցում է 3մ/վ, լեռնացքային հատվածներում 10մ/վ և ավելի: Մթնոլորտային ճնշումը ցածր է 595-615 մմ ս.ս.:(Կլիմայական տեղեկագիր, 2012) ԷԷՋ Ջերմուկում կազմում է 8,5°C, Սևանում՝ 7,5°C, և գնահատվում են որպես «զով» պայմաններ, ցածր է նաև ՆԷԷՋ ցուցանիշները, համապատասխանաբար 13,8 և 13°C : Օդերևութաբանական նման ցուցանիշները, հատկապես մթնոլորտային ճնշման, սահմանափակում են սիրտանոթային, մասնավորապես հիպերտոնիկ հիվանդությունով զբոսաշրջիկների այցելություններն այս գոտու զբոսավայրեր ու առողջարաններ: Այսպիսի եղանակային պայմաններում զբոսաշրջիկների ճիշտ հագնվելը շատ կարևոր է, քանի որ երեկոյան ժամերին ջերմաստիճանն իջնում է, իսկ ջերմաստիճանային նման տատանումները կարող են բացասաբար անդրադառնալ նրանց ինքնազգացողության վրա, հետևաբար պահանջվում են թեթև վերնազգեստներ, իսկ երեկոյան ժամերին տաք կերակուր և ըմպելիքներ:

Այսպիսով առանձնացված գոտիներում զբոսաշրջիկների կամ ուղղակի հանգստացողների համար կան որոշակի անհարմարավետություններ, որոնք փոքր չափով սահմանափակում են հատկապես առողջական որոշ խնդիրներ ունեցողների հանգստի կազմակերպումը, սակայն էական է նաև այս տարրերի առողջարար ներուժը, որը թույլ է տալիս ավելի մեծ չափով զարգացնել առողջարանային զբոսաշրջությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավագյան Հ., Աբրահամյան Ռ., Ադամյան Կ. և ուրիշներ, Հանրամատչելի բժշկական հանրագիտարան, Երևան 2001, էջ 229-230, 331-332,
2. Կլիմայական տեղեկագիր, 2012, Երևան 2012, 172 էջ
3. Кружалин В., Симонов Ю., Симонова Т., Человек ,общество рельеф, Москва 2004, 120с.
4. Синицын И., Георгица И., Иванова Т., Биоклиматическая характеристика территории в медико-географических целях ,Ярославский педагогический вестник №4-том III, Ярославль 2013, 279-283с.

MEDICAL-GEOGRAPHICAL FEATURES OF DEVELOPMENT OF TOURISM IN ARMENIA

Valesyan A.P.

Shirak State University, Gyumri, Republic of Armenia, an.valesyan @mail.ru

ANNOTATION

The impact of relief and climate on human body is quite huge. Therefore medical-geographical estimation of several tourist areas located in various heights are done. Estimation of climate and weather comfort and temperature sensation of a person is done for 3 separate zones, using 2 mathematical formulas /authors Missenard and Budiev/.

ՉԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Դավթյան Տ.Պ.

Երևանի պետական համալսարան, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
tigrandavtian@gmail.com

Ժամանակակից շուկայական տնտեսությունը բնութագրվում է սուր մրցակցային պայքարի առկայությամբ, որի պայմաններում հաջողության կարող են հասնել այն կազմակերպությունները, որոնք կարողանում են դիմակայել այդ պայքարում և հասնել իրենց առջև դրված առևտրային նպատակների իրագործմանը, այսինքն՝ մրցունակ են:

Մրցունակությունը բարդ տնտեսագիտական կատեգորիա է, տնտեսագետները տարբեր կերպ են այն մեկնաբանում և առ այսօր գոյություն չունի այդ կատեգորիայի միանշանակ բնորոշում: